ՆԱԽԱԳԻԾ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

ԱՐԳԱՄ ՕՆԻԿԻ ՄԱԹՈՍՅԱՆԻՆ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով, 48[1]-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ կետի «ա» ենթակետով, հիմք ընդունելով Արգամ Օնիկի Մաթոսյանի ներկայացուցիչ Ալբերտ Օնիկի Մաթոսյանի դիմումը՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համաձայնություն տալ Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 24072023-06-0044 վկայական), «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ Սպիտակ ք. Ս. Ավետիսյան փողոց 19/7 հողամաս» հասցեում գտնվող, 06-006-0019-0105 կադաստրային ծածկագրով 0,00192 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, ավտոտնակ կառուցելու համար, կառուցապատման իրավունքով, 25 տարի ժամկետով Արգամ Օնիկի Մաթոսյանին տրամադրելուն:

2. Հողամասի կառուցապատման իրավունքի տարեկան վճար սահմանել 6 000 ՀՀ դրամ: